



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2010թ. երրորդ եռամսյակում  
իրականացված գործունեության  
վերաբերյալ



2010

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2010թ. երրորդ եռամսյակում իրականացված գործունեության վերաբերյալ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2010թ. հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումները և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

### **1. Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումները**

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2010թ.-ի մայիսի 3-ի N 316-Ա հրամանով հաստատված նոր կառուցվածքի և հաստիքացուցակի համաձայն՝ 2010 թվականի 3-րդ եռամսյակում աշխատանքից ազատվել են 10 աշխատող, որոնցից 9-ը՝ դիմումի համաձայն, իսկ 1-ը՝ գործատուի նախաձեռնությամբ: Հաշվետու ժամանակահատվածում ուժի մեջ է մտել «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի պահանջներից ելնելով կատարվել են համապատասխան փոփոխություններ հաստիքակազմի ձևակերպումներում և աշխատանքային պայմանագրերում: Մասնավորապես, Վանաձորի և Կապանի տարածքային ստորաբաժանումների ծառայություններ մատուցող աշխատակիցները ձևակերպվել են որպես հաստիքային աշխատողներ:

### **2. Ստանդարտացում**

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 608-Ն որոշմամբ հաստատված «Ստանդարտների մշակման ծառայությունների 2010 թվականի ծրագրի»՝ 3-րդ եռամսյակում ինստիտուտի գիտխորհրդի կողմից ընդունվել է 15 ազգային ստանդարտ՝ միջազգային ստանդարտներին ներդաշնակ, որոնք հաստատվել և գործողության մեջ են դրվել ՀՀ տարածքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից (*հրամաններ N 619-Ա առ 09.08.2010 և N 795-Ա առ 29.09.2010թ.*):

Ստանդարտացման ծրագրով նախատեսված **54** ստանդարտներից ներկայումս մշակվել է **39** ստանդարտ, որոնք ընդունվել և գործողության մեջ են դրվել: Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ստանդարտացման ծրագիրը կատարվել է **72%**-ով, իսկ **15** ստանդարտների նախագծեր գտնվում են մշակման փուլում (մշակված է առաջին խմբագրությունը):

***Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում  
և իրականացում***

Ի կատարումն ՀՀ էկոնոմիկայի նախարարի սեպտեմբերի 15-ի N 742-Ա հրամանի, 3-րդ եռամսյակում կատարվել են կազմակերպչական աշխատանքներ ստանդարտացման նոր տեխնիկական հանձնաժողովները ձևավորելու նպատակով, որի արդյունքում ստեղծվել է ***ՏՀ 10 «Ալկոհոլային խմիչքներ»*** և ***ՏՀ 11 «Ծխախոտ և ծխախոտային արտադրանք»*** ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները (Ստանդարտների ազգային ինստիտուտի 29.09.2010թ. N 53-Վ և N 54-Վ հրամաններ): Այդ հանձնաժողովների նպատակն է ուսումնասիրել և գնահատել ալկոհոլային խմիչքների և ծխախոտի ցուցանիշների համար միջազգային նորմերի և դրանց փորձարկման մեթոդների կիրառման հնարավորությունները ՀՀ-ում, ինչպես նաև միջազգային փորձարկման մեթոդների կիրառումը ազգային ստանդարտների կարգավիճակով:

Նշված ժամանակահատվածում վերակազմավորել է ՏՀ 8 «Ջրի որակ» տեխնիկական հանձնաժողովը՝ կազմում ընդգրկելով բոլոր շահագրգիռ արտադրող և փորձարկող կազմակերպությունները (Ստանդարտների ազգային ինստիտուտի հրաման N 46-Վ առ 19.08.2010 թ): Կազմակերպվել է ***ՏՀ 8 «Ջրի որակ»*** տեխնիկական հանձնաժողովի հերթական միստր, որտեղ քննարկվել են 9 ազգային ստանդարտների նախագծերի մշակման և ընդունման հարցերը: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել ***ՏՀ 6 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ»*** և ***ՏՀ 4 «Կաթ և կաթնամթերք»*** տեխնիկական հանձնաժողովների վերակազմավորման նպատակով:

Հեռանկարային ստանդարտացման ծրագրի (2011-2015թթ.) և ստանդարտացման 2011թ. ծրագրերի նախագծերի ձևավորելու նպատակով Ինստիտուտը ակտիվ համագործակցել է ***ՏՀ 1 «Էներգետիկա»***, ***ՏՀ 7 «Հակասեյսմիկ սարքավորանք»***, ***ՏՀ 9 «Քիմիական արտադրանք»*** և ***ՏՀ 5 «Գազամատակարարում»*** ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հետ:

***ՀՀ պետական կառավարման մարմինների 2011թ. պետական գնումների  
անվանացանկերի (N2 և N3 ամփոփ ձևերը) փորձաքննություն***

Համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի հուլիսի 14-ի հրամանի «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից պետական և ծառայողական գաղտնիք չպարունակող տվյալ տարվա պետական գնումների անվանացանկի կազման ու ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման կարգը հաստատելու մասին» կատարվել է թվով ***49 հատ*** 2011 թվականի պետական գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ամփոփ անվանացանկերի փորձաքննություն՝ կողերի, տեխնիկական բնութագրերի և չափման միավորների մասով:

***Ստանդարտացման հեռանկարային (2011-2015թթ.) և 2011թ. ծրագրերի  
նախապատրաստում***

3-րդ եռամսյակում համատեղ ՀՀ պետական կառավարման մարմինների հետ աշխատանքներ են իրականացվել հեռանկարային ստանդարտացման զարգացման և ստանդարտացման 2011թ. ծրագրերի նախագծերի մշակման և ձևավորման ուղղությամբ: Նշված ծրագրերի նախագծերը մշակվել են ՀՀ պետական կառավարման մարմինների և 11 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա:

Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2011 թվականի ծրագրի հիմնական նպատակն է աջակցել`

- արտադրանքի անվտանգության ապահովմանը սպառողական շուկայում,
- ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանը արտադրական գործընթացում,
- արտադրանքի որակի և մրցունակության բարձրացմանը,
- գործարարներին հայրենական արտադրանքի արտահանման գործընթացում,
- Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմանը:

Նշված ծրագրերի նախագծերով նախատեսված է միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակումը տնտեսության հետևյալ գերակայող ոլորտների համար` էներգետիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցություն, գազամատակարարում, սեյսմասարքավորում, սննդարդյունաբերություն, գյուղատնտեսության և քիմիական արտադրանք:

***Միջազգային համագործակցություն***

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 30 միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Կատարվել են վերլուծական աշխատանքներ նոր ընդունված ԻՍՕ և ԵՆ ստանդարտների ՀՀ-ում կիրառման վերաբերյալ: Նախապատրաստվել են տնտեսության տարբեր ճյուղերի համար միջազգային և եվրոպական ստանդարտների ցանկեր, որոնց կիրառման վերաբերյալ ՀՀ-ում կարծիքներ պետք է հավաքվի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից:

Պարբերաբար, ըստ անհրաժեշտության իրականացվել է մասնակագրություն միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ինչպես նաև ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների հետ:

Նախապատրաստվել է ստանդարտացման եվրոպական կոմիտեի կողմից հրատարակված նոր ստանդարտների ցանկերը և այդ ստանդարտների էլեկտրոնային տարբերակները հանձնվել են Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդին:

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2010 թվականի սեպտեմբերի 13-18 մասնակցել է Նորվեգիայի Օսլո քաղաքում տեղի ունեցած ԻՍՕ-ի՝ Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության 33-րդ վեհաժողովին: Ստանդարտների ազգային ինստիտուտը մասնակցում է 38 տեխնիկական հանձնաժողովների և 3 քաղաքականության մշակման հանձնաժողովների՝ ԿԱՍԿՕ, ԴԵՎԿՕ և ԿՕՊՕԼԿՕ աշխատանքներին: Վեհաժողովի ընթացքում Հայաստանի պատվիրակությունը առանձնակի հանդիպումներ ունեցավ ԻՍՕ-ի նախագահ պրն. Ալան Սորիստնի, նորընտիր նախագահ պրն. Բորիս Ալոշինի, ԻՍՕ-ի գլխավոր քարտուղար պրն. Ռոբ Սթիլի, ԴԵՎԿՕ-ի գլխավոր քարտուղար պրն Բիեր Բուդուի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, ԱՄՆ-ի, Սաուդյան Արաբիայի, Իրանի, Հորդանանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի, Տաջիկստանի, և այլ պատվիրակությունների հետ: Այդ առանձնագրույցների և քննարկումների արդյունքում, մասնավորապես, քննարկվեցին երկուստեք համագործակցության հնարավորությունները:

ԻՍՕ-ի 33-րդ վեհաժողովը Ստանդարտների ազգային ինստիտուտի համար նշանավորվեց նաև ԻՍՕ-ի Խորհրդում 2011-2012թթ. ժամկետով ընտրվելու հանգամանքով: Անդամակցության աշխատանքները սկսվել էին դեռևս 2009թ. սկզբներին: Բազմաթիվ հանդիպումներ, բանակցություններ, Ինստիտուտի աշխատանքների ներկայացում, միջազգային շփումների ակտիվացում, միջազգային ստանդարտացման աշխատանքներում Հայաստանի դերի բարձրացում և այլն: Արդյունքում, հիմնվեցին ամուր կապեր գրեթե բոլոր երկրների հետ:

Այս բոլոր աշխատանքների շնորհիվ Հայաստանը ներկայումս զգալիորեն բարձր վարկանիշ ունի միջազգային ստանդարտացման ասպարեզում: ԻՍՕ Խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով Ստանդարտների ազգային ինստիտուտն առաջադրվեց ավելի քան 50 երկրի կողմից, ինչը լուրջ գրավական էր հաջողությամբ ընտրվելու համար: ԻՍՕ-ի 33-րդ վեհաժողովի ավարտից հետո, սեպտեմբերի 19-ին Հայաստանի պատվիրակությունը դիտորդի կարգավիճակում առաջին անգամ մասնակցեց ԻՍՕ-ի Խորհրդի նիստին:

Հաշվետու ժամանակաշրջանում Միջազգային էլեկտրատեխնիկական Հանձնաժողովի (ՄԷՀ) հետ համագործակցության արդյունքում Ինստիտուտը հաստատվեց որպես ՄԷՀ գործընկեր անդամ: Այդ շրջանակներում, ՄԷՀ-ի կողմից առաջարկվեց Ինստիտուտին անվճար հիմունքներով 400 ՄԷՀ ստանդարտների տրամադրում, պայմանով, որ դրանցից 50-ը պետք է մշակվեն և ներդրվեն որպես ազգային ստանդարտներ: Ինստիտուտը գրությամբ դիմել է համապատասխան շահագրգիռ կողմերին՝ էլեկտրատեխնիկական ոլորտում անհրաժեշտ ՄԷՀ ստանդարտների պահանջի ձևավորման նպատակով:

Ինստիտուտն ակտիվ համագործակցում է նաև մի շարք այլ միջազգային կառույցների հետ, ինչպիսիք են Եվրոպական ստանդարտացման կոմիտեն (CEN) (գործընկեր անդամ), Միջազգային հեռահաղորդակցության միությունը (ITU), Համաշխարհային ստանդարտացման կազմակերպությունը (WSO), ՄԱԿ-ի Եվրոպական հարցերով Տնտեսական Հանձնաժողովը (UNECE) և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի աշխատակիցները մի շարք այցելություններ են կատարել վերը նշված միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին և ուսայցերին:

### *Միջպետական համագործակցություն*

Իրականացվել են միջպետական ստանդարտացման աշխատանքներ՝ ԱՊՀ երկրների ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՄՊԽ) կայքի մշտական ուսումնասիրություն, ՄՊԽ կայքում տեղադրված և պաշտոնապես կարծիքի ներկայացված նյութերի վերլուծություն:

Ուկրաինայի Պետստանդարտից ստացված սպառագինման և զինվորական տեխնիկայի բնագավառի նախկին խորհրդային Միության միջպետական ստանդարտների վերաբերյալ նամակի պատասխանի նախագիծը կից գրությամբ ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Ի պատասխան ՄՊԽ ստացված գրության, կապված ՄՊԽ Գործադիր կոմիտեի կողմից ԱՊՀ մասնակից պետությունների կառավարություններ ուղարկված «ՄՊԽ գործունեության վերաբերյալ հաշվետվություն» փաստաթղթի և կից նյութերի վերաբերյալ նամակ է ուղարկվել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

ՍԶՍ միջպետական խորհրդի 37-րդ նիստի իրագործման օրացուցային պլանի 51.3 կետով ազգային մարմիններին տրված հանձնարարականի կատարման համար «Գազամատակարարում» ՏՀ նախագահին և «Հայրուսզազարդ» են ուղարկվել նավթագազային սեկտորի ստանդարտների ցանկ, դրանց միանալու և ՀՀ-ում գործողության մեջ դնելու վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով: Պատասխանը, ստացված առաջարկությունների հիման վրա, կից գրության հետ ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՄՊԽ ներկայացնելու նպատակով:

ՍԶՍ ՄՊԽ 37-րդ արձանագրության 49.3 կետի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ուղարկվել պատասխան նամակ:

ՍԶՍ ՄՊԽ 37-րդ արձանագրության հավելված-ցանկերում՝ 09-2010 և այլ ցանկերում ընդգրկված ստանդարտների վերաբերյալ նամակի պատասխանի նախագիծը կից գրությամբ ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

ԳՕՍՏ 18423, ԳՕՍՏ 7455, ԳՕՍՏ 25856, փոփոխ.Ո1 ԳՕՍՏ 24301-93 և փոփոխ.Ո1 ԳՕՍՏ 31294 ստանդարտների վերաբերյալ նամակներ են ուղարկվել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ միջպետական տեխնիկական ենթահանձնաժողովի և ՄՊԽ ուղարկվող պատասխան նամակների նախագծերի հետ միասին:

Չափագիտության ազգային ինստիտուտ գնահատման է ուղարկվել 2 միջպետական ստանդարտի նախագիծ:

Նախապատրաստվել է մեքենաշինության ոլորտի 600-ից ավելի ստանդարտների և «Կաթ և կաթնամթերք» ոլորտի 30-ից ավելի ստանդարտների ցանկեր՝ ՀՀ-ում գործողությունը դադարեցնելու նպատակով:


ՀՀ քաղաքաշինության նախարարությունից ստացված վեց միջպետական ստանդարտների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ տալու և դրանք ՀՀ-ում կիրառելու մասին Ստանդարտների ազգային ինստիտուտի պատասխանը ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

**Ստանդարտների ազգային ֆոնդի համալրում և վարում**

3-րդ եռամսյակում Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է *353 միջազգային (ԻՍՕ), 230 եվրոպական (ԵՆ), 11 միջպետական (ԳՕՍՏ), 203 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ) և 23 Հայաստանի Հանրապետության (ՀՍՏ)* նոր ստանդարտներով: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են, իսկ թղթի կրիչով ստանդարտները հաշվառման են վերցվել մատյանում:

Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման նպատակով 2010թ. երրորդ եռամսյակում կատարվել է **470** միավոր ստանդարտի տեխնիկական մշակում (փոփոխություններ, լրացումներ, տեղեկություն չեղյալ հայտարարելու և փոխարինող ստանդարտների մասին) և վերստուգում ըստ միջպետական ստանդարտի տեղեկատուի և գործող ԱՊՀ երկրների համար տեղեկատվական որոնման համակարգի:

**Գծանկար 1 - Ստանդարտների ազգային ֆոնդի համալրումը 2009թ.-ի 9 ամսվա համեմատ, քանակը միավորներով**



**Ստանդարտացման և համապատասխանության հավաստման բնագավառում տեղեկատվական աշխատանքների կազմակերպում և սպասարկում**

Սպասարկման նպատակով 2010թ. երկրորդ եռամսյակում իրականացվել է 56 կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկում ստանդարտացման և համապատասխանության բնագավառում:


Հաշվետու ժամանակահատվածում բաժինը կնքել է 10 կազմակերպությունների հետ նոր պայմանագրեր **1260,0** հազ. դրամի:

Աբոնենտային տեղեկատվական սպասարկման արդյունքում կազմվել է 11 ակտ` **1020,0** հազ. դրամ, հետևյալ կատարված աշխատանքների մասին.

- ✚ տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀՍՏ) և արտասահմանյան երկրների (այդ թվում ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- ✚ կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ✚ ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- ✚ աբոնենտին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 20),
- ✚ խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության հավաստման փաստաթղթերի վերաբերյալ:

Իրականացվել է նաև տեղեկատվական սպասարկում ՀՀ պետական կառավարման մարմիններին, բոլոր կազմակերպություններին, ֆիզիկական անձանց և ստանդարտների ազգային ինստիտուտի ստորաբաժանումների շուրջ **1120** դիմողների համար: Նշված աշխատանքները իրականացվել են պետպատվերի շրջանակներում:

**Գծանկար 2 - Ստանդարտացման և համապատասխանության բնագավառում ՀՀ կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկման զուևարային դինամիկան 2009թ.-ի 9 ամսվա համեմատ, հազ. դրամ**



**Տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվության և փորձաքննության  
աշխատանքներում մասնակցություն**


Կազմակերպվել է վճարովի ծառայություն՝ տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվություն, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար տեխնիկական պայմաններ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին:

Կատարվել են շուրջ 66 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների մշակման խորհրդատվական աշխատանքներ: Հաշվետու ժամանակաշրջանում խորհրդատվական աշխատանքների վճարովի ծառայությունների գումարը կազմել է **2844,0** հազ. դրամ:

Կազմակերպվել են ներկայացված պետական գրանցման տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքները, որոնք իրականացվել են որպես վճարովի ծառայություն: Տեխնիկական պայմանների փորձաքննության հիմնական նպատակն է համապատասխանեցնել կազմակերպության նորմատիվ փաստաթուղթը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության պահանջներին, տեխնիկական կանոնակարգերին և ազգային ստանդարտներին: Բաժինը կատարել է 88 տեխնիկական պայմանների և 42 տեխնիկական պայմանների փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են **3680,0** հազ. դրամի տեխնիկական պայմանների փորձաքննության ծառայություններ:

**Գծանկար 3 - Տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվության և փորձաքննության աշխատանքներից 2009 և 2010թթ. առաջին 9 ամիսների ընթացքում ստացված համախառն եկամտի դինամիկան, հազ. դրամ**



### ***Ստանդարտների ազգային ֆոնդի փաստաթղթերի վերլուծություն և արդիականացում***

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ազգային ֆոնդում ընդգրկված ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վերլուծության և ուսումնասիրության աշխատանքները, որի հիմնական նպատակն է հայտնաբերել արդիականությունը կորցրած, ՀՀ տնտեսության որևէ ճյուղի համար հետաքրքրություն չներկայացնող, տեխնոլոգիապես և բարոյապես հնացած ստանդարտները և դադարեցնել դրանց գործողությունը ՀՀ տարածքում կամ փոխարինել դրանք նոր միջազգային կամ ազգային ստանդարտներով: Հաշվետու ժամանակաշրջանում վերլուծության են ենթարկվել մեքենաշինության ոլորտում օգտագործվող միջպետական ստանդարտները, որի արդյունքում պարզվել է, որ մի շարք ստանդարտներ, որոնք սահմանում են արտադրանքի կառուցվածքը և չափսերը, շուրջ 15 տարի որևէ պահանջարկ չունեն մեքենաշինության ոլորտում և կորցրել են իրենց արդիականությունը: Նշված աշխատանքների արդյունքում բաժինն առաջարկել է 691 միջպետական ստանդարտների գործողությունը դադարեցնել ՀՀ-ում:

Նույնատիպ աշխատանքներ իրականացվել են սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում, որի արդյունքում առաջարկվել է 150 միջպետական ստանդարտի գործողությունը դադարեցնել ՀՀ-ում: Գործընթացը շարունակական է:

### ***Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանների վարում***

Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի (ազգային ստանդարտների և տեխնիկական պայմանների) գրանցումը, հաշվառումը իրականացվում է համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի և ստանդարտացման ազգային համակարգի հիմնադրությային ստանդարտների (ՀՍՍ 1.2-2001 և ՀՍՍ 1.3-95):

3-րդ եռամսյակում գրանցվել է 23 Հայաստանի Հանրապետության (ՀՍՍ) ստանդարտ: 10 միջպետական (ԳՕՍՍ) ստանդարտներ նախապատրաստվել են գործարկման Հայաստանի Հանրապետությունում:


Իրականացվել է Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների կողմից մշակված և հաստատված տեխնիկական պայմանների գրանցում պետական գրանցամատյանում՝ 88 տեխնիկական պայմանների և 42 տեխնիկական պայմանների փոփոխություններ:

### ***Ստանդարտների վաճառքի կազմակերպում և իրականացում***

Ստանդարտների վաճառքը իրականացվում է պայմանագրային հիմունքներով ըստ հաստատված գնահաշվարկի և տրված հաշիվ-ապրանքագրի կամ անդորրագրի: Ազգային ստանդարտների մեծ քանակով վաճառքի դեպքում կազմակերպության կողմից ներկայացվում է հայտ անհրաժեշտ ստանդարտների գնման վերաբերյալ և կնքվում է պայմանագիր:

2010թ. երրորդ եռամսյակում իրականացվել է ստանդարտների վաճառք 33 կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին 173200 դրամի:

**Գծանկար 4 - 33 կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի գումարային դինամիկան, դրամ**



**Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ավտոմատացում**

«Ստանդարտ» տեղեկատվական որոնման համակարգի արդիականացման նպատակով բաժնի կողմից համակարգչի միջոցով իրականացվել է ազգային ստանդարտների տվյալների բազայի մուտքագրում՝ հաշվի առնելով գործարկված 2009թ. և 2010թ. Հայաստանի Հանրապետությունում բոլոր միջազգային, միջպետական և եվրոպական ստանդարտները, ինչպես նաև չեղյալ հայտարարված և գործողությունը դադարեցված ազգային ստանդարտները:

Հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել է էլեկտրոնային բազայում Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դրված 28 ազգային ստանդարտների մատենագիտական տվյալները:

**Ստանդարտացման բնագավառում հրատարակչական աշխատանքների իրականացում**

2010 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար նախապատրաստվել է հրատարակման «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» 2010թ. N 2 եռամսյակային տեղեկատու, N 4-2010 և N 5-2010 տեղեկատվական թերթիկները:

**Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հարցման կետի աշխատանքների կազմակերպում և իրականացում**

Բաժինը Առևտրի համաշխարհային կազմակերպության Հայաստանի Հանրապետության հարցման կետի կարգավիճակով երրորդ եռամսյակում ԱՀԿ անդամ երկրներից հարցումներ

ներմուծվող արտադրատեսակների վերաբերյալ գործող տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության հավաստման ընթացակարգերի մասին ստացել է 6 հարցում (Իտալիա, Ճապոնիա, Լեհաստան, Ֆրանսիա և այլն) և նախապատրաստել է հարցման պատասխաններ:

### **3. Փորձարկման լաբորատորիաներ**

Ինստիտուտում գործում են 6 հավատարմագրված փորձարկման լաբորատորիա:

**Ինստիտուտի** փորձարկման լաբորատորիայում 3-րդ եռամսյակում կատարվել է 303 փորձարկում և տրվել է 303 փորձարկման արձանագրություն: 2010 թվականի 3-րդ եռամսյակում իրականացվել է **7553,8 հազ. դրամի** փորձարկումներ:

**Երևանի** նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում 3-րդ եռամսյակում կատարվել է 274 փորձարկում և տրվել է 274 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում կատարվել է 286 փորձարկում և տրվել է 286 փորձարկման արձանագրություն:

**Ֆիզիկաքիմիական փորձարկման լաբորատորիայում** 3-րդ եռամսյակում կատարվել է 51 պարարտանյութի փորձարկում և տրվել է 51 փորձարկման արձանագրություն: Իրականացվել է **8914,5,0 հազ. դրամի** փորձարկումներ:

**Ռադիոէլեկտրական սարքավորումների** փորձարկման լաբորատորիայում 3-րդ եռամսյակում կատարվել է 42 փորձարկում և տրվել է 42 փորձարկման արձանագրություն: Իրականացվել է **845,1 հազ. դրամի** փորձարկումներ:

**Գյումրու** փորձարկման լաբորատորիայում 3-րդ եռամսյակում կատարվել է 146 փորձարկում և տրվել է 146 փորձարկման արձանագրություն: Իրականացվել է **3662,9 հազ. դրամի** փորձարկումներ:


**Վանաձորի** փորձարկման լաբորատորիայում կատարվել է 89 փորձարկում և տրվել է 108 փորձարկման արձանագրություն՝ **2264,5 հազ. դրամի**:

3-րդ եռամսյակում աշխատանքային վիճակի են բերվել անհրաժեշտ բոլոր լաբորատոր սարքավորումները: Ստուգաչափվել են բոլոր փորձարկման լաբորատորիաների ստուգիչ և չափիչ սարքավորումները:

Ամբողջությամբ վերանորոգվել և վերազինվել է Գյումրու փորձարկման լաբորատորիան: Վերանորոգման է ենթարկվել նաև նավթամթերքների փորձարկման լաբորատորիայի տարածքը:

Գծանկար 2-ում տրված է փորձարկման լաբորատորիաների կողմից տրված փորձարկման արձանագրությունների քանակը 2009 թվականի 9 ամսվա համեմատ: Իրականացված արդիականացման ու վերազինման աշխատանքների հետևանքով 2009թ. 9 ամիսների համեմատ աճել է փորձարկումների քանակը:

**Գծանկար 5 - Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում 2009-2010թթ. կատարված փորձարկումների քանակական դինամիկան**



**4. Համապատասխանության հավաստում**

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Հաշվետու եռամսյակում համապատասխանության հավաստման աշխատանքների ոլորտում նկատվել է ընդհանուր պահանջարկի նվազում, ինչը կապված է եղել տնտեսական ակտիվության և առևտրի ծավալների որոշակի նվազման հետ: Այսպես, հաշվետու ժամանակաշրջանում`

**ա) ոչ պարենային ապրանքների գծով տրվել են`**

- 486 ներմուծվող արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ,
- 21 սերիական արտադրության արտադրանքի սերտիֆիկատ,
- 293 ներմուծվող արտադրանքի վավերացված հայտարարագիր:

Համապատասխանության հսկողություն է իրականացվել 8 կազմակերպությունում, ընդունվել են դադարեցման և կասեցման 2 որոշումներ.

**բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են`**

- 575 համապատասխանության սերտիֆիկատ,
- 180 համապատասխանության հայտարարագիր:


Համապատասխանության հսկողություն է իրականացվել 12 կազմակերպությունում, ընդունվել են դադարեցման և կասեցման 3 որոշումներ.

**գ) ծառայությունների սերտիֆիկացման գծով`**

տրվել է սննդի ապահովման ծառայության 111 համապատասխանության սերտիֆիկատ,

41 ընկերություններում կատարվել է սննդի ապահովման ծառայության համապատասխանության հսկողություն:

**Գծանկար 6 - Սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սերտիֆիկացման մարմինների կողմից իրականացված համապատասխանության հավաստման աշխատանքների 2009-2010թթ. քանակական դինամիկան 9 ամսվա կտրվածքով, հատ**




**Կառավարման համակարգերի սերտիֆիկացում**

2010 թվականի 3-րդ եռամսյակում Ինստիտուտի կողմից կատարվել է 3 կազմակերպությունների որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման աշխատանքներ և 3 կազմակերպությունում՝ համապատասխանության հսկողության աշխատանքներ:

Ինստիտուտի կողմից լայնածավալ աշխատանքներ են իրականացվել 50-ից ավել կազմակերպություններում որակի, էկոլոգիական և սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի կիրառման և սերտիֆիկացման օգուտների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ու լավագույն փորձի կիրառման ուղղությամբ:

**Գծանկար 7 - Կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների կողմից իրականացված համապատասխանության հավաստման աշխատանքների քանակական դինամիկան 2009 թ.-ի 9 ամսվա համեմատ, հատ**



## **5. Ուսումնական կենտրոն**

2010թ-ի երրորդ եռամսյակում շարունակվել են Ուսումնական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) գործունեության միջազգային չափանիշներին ներդաշնակեցման աշխատանքները:

Հաշվետու եռամսյակում ՀՀ 20 կազմակերպությունից և անհատներից ստացված նամակների ու հայտերի համաձայն՝ 55 հայտատուից ձևավորվել է ունկնդիրների 6 խումբ, որոնց համար կազմակերպվել է համապատասխան ուսուցում և վերապատրաստում: Դասընթացներն անցկացվել են սլայդների ցուցադրմամբ և միջազգային պրակտիկայում ընդունված ինտերակտիվ մեթոդներով:

Վերապատրաստումը գնահատվել է թեսթավորումների միջոցով, որոնց արդյունքներով ունկնդիրներին հանձնվել են վկայականներ և սահմանված կարգով գրանցվել գրանցամատյանում:

***Կենտրոնի 2010թ-ի երրորդ եռամսյակի գործունեության համադրումը երկրորդ եռամսյակի արդյունքների հետ, թույլ է տալիս փաստելու հետևյալը:***

➤ Նախորդ եռամսյակի համեմատ գրեթե պահպանվել է ունկնդիրների և հայտատու-կազմակերպությունների թիվը. երկրորդ եռամսյակում վերապատրաստվել է ՀՀ 23 կազմակերպություն ներկայացնող 53 ունկնդիր, երրորդ եռամսյակում՝ ՀՀ 20 կազմակերպությունից 55 ունկնդիր: Դիտարկումը Կենտրոնի կայուն գործունեության ցուցանիշ է:

➤ Թրեյնինգների արդյունքների գնահատման թերթիկների ամփոփումը թույլ է տվել արձանագրելու ունկնդիրների պահանջումների բավարարվածություն 98%-ով, որը Կենտրոնի ընդունած ՈՐԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ- ով ամրագրված ցուցանիշի կատարումն է:

➤ Ունկնդիրների առաջարկներին տրվել է 100% ընթացք և լուծումներ: Այս ցուցանիշը նույնպես համահունչ է Կենտրոնի ամրագրած ՈՐԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ-ին:

Հաշվետու եռամսյակում վերանայվել և արդիականացվել են համապատասխանության գնահատման ոլորտում փորձագետների որակավորման հարցաշարերը: ՀՊՃՀ դասախոս Կ.Սահակյանի կողմից մշակվել և գործողության մեջ է դրվել «Սեղմված բնական կամ հեղուկացված գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վերասարքավորման ծառայություններ» -ի ոլորտի նոր հարցաշարը:

Կազմակերպվել է փորձագետների որակավորման 1 թեսթավորում և 1 հարցազրույց, որին մասնակցել են 8 կազմակերպության 8 հավակնորդ: Փորձագետների որակավորման հանձնաժողովի որոշմամբ 6 հավակնորդի հանձնվել է տարբեր ոլորտների փորձագետի 7 վկայագիր, գրանցելով Ստանդարտների ազգային ինստիտուտի էլեկտրոնային կայքում և գրանցամատյանում:

## **6. Ինստիտուտի գործունեությանն առնչվող այլ աշխատանքներ**

Հաշվետու եռամսյակում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում:

Աշխատանքներ են տարվել բոլոր հաստիքների նոր պաշտոնեական հրահանգների և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի մշակման ուղղությամբ: Մշակվել և հաստատվել են Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները:

Երկու քաղաքացիական գործով ներկայացվել է Ինստիտուտի շահերը Երևանի և Շիրակի մարզի դատական ատյան: Գործընթացը շարունակելի է:

Մասնակի վերանորոգման է ենթարկվել Կոմիտասի 49/2 շենքի աստիճանավանդակների տարածքը՝ հրդեհային անվտանգության ապահովման նպատակով: Միաժամանակ, ՀՀ ոստիկանության Պետական ունեցվածքի պահպանման ծառայության հետ կնքված պայմանագրով նրանց հսկողությանն է հանձնվել Կոմիտասի 49/2 գլխավոր մասնաշենքի պահպանությունը:

Հինք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Առևտրի և տնտեսական զարգացման նախարարի միջև ստորագրված համագործակցության հուշագրի պահանջները, աջակցության շրջանակներում Ինստիտուտի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստանդարտացման կոմիտեին նվիրաբերվել են շուրջ 3 մլն. դրամի լաբորատոր սարքավորումներ և համակարգիչներ, ինչպես նաև ՎԱԶ 21-07 մակնիշի ավտոմեքենա:

«Եվրովագեն» ընկերությունից ձեռք է բերվել տեխնիկապես անթերի նոր ավտոմեքենա, ինչի մասին ըստ էության տեղեկացվել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարին ուղղված Ստանդարտների ազգային ինստիտուտի 20.10.2009թ. թիվ ԵԱ-780 գրությամբ:

Ինստիտուտի գործունեության քարոզման, ինչպես նաև միջազգային ստանդարտացման կառույցներում Ինստիտուտի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով պատվիրվել և նկարահանվել է ֆիլմ Ստանդարտների ազգային ինստիտուտի գործունեության մասին: Ֆիլմը հայերեն և անգլերեն լեզուներով հնչյունավորված է: Ֆիլմը տարբեր միջոցառումների ժամանակ արդեն իսկ տրամադրվել է մի շարք երկրների Ստանդարտների ազգային ինստիտուտներին և ստանդարտացման միջազգային կազմակերպություններին:

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2009թ. մայիսի 4-ի թիվ 12/4 որոշման հիման վրա «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում իրականացված վերահսկողության արդյունքներով հայտնաբերված բոլոր խախտումներն ու թերությունները վերացվել են:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի շրջանակներում իրականացվել են «Ստանդարտացման մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքները, որոնք մյուս եռամսյակի ընթացքում կավարտվեն և օրենքի նախագիծը կներկայացվի շահագրգիռ կողմերի քննարկմանը:

## ***7. Ինստիտուտի գործունեությանը խոչընդոտող խնդիրներ***

Զնայած Ինստիտուտի կողմից հաշվետու եռամսյակում իրականացված բարենպաստ աշխատանքներին, ներկայումս գոյություն ունեն մի շարք լուրջ խնդիրներ, որոնք խոչընդոտում են Ինստիտուտի արդյունավետ գործունեությանը: Դրանք են՝

1. Դեռևս 2009թ.-ին, ՀՀ կառավարության 26.02.1998թ. թիվ 116 որոշման համաձայն, Ինստիտուտի կողմից կազմակերպվեց և իրականացվեց որակի բնագավառում կազմակերպությունների մրցանակաբաշխության արարողությունը: Մրցանակաբաշխության արդյունքում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից գնահատված և մրցանակներ ստանալու թեկնածու կազմակերպությունների ցանկը ներկայացվեց ՀՀ կառավարության հաստատմանը: Սակայն, որոշման նախագիծը մինչ այժմ չի ընդունվել ՀՀ կառավարության կողմից, ինչը լուրջ դժգոհություն է առաջացրել այդ կազմակերպությունների շրջանում: Լուծման բացակայությունը մեծ վնաս է հասցնում Ինստիտուտի հեղինակությանը ու վարկանիշին:
2. Դեռևս 2009թ. Ինստիտուտի փորձարկման լաբորատորիայի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության պատվերով իրականացվել է բնական հյութերի 1.3 մլն դրամի փորձարկման աշխատանքներ, ինչի կապակցությամբ սահմանված կարգով ներկայացվել է ֆինանսավորման պահանջ: Սակայն ֆինանսավորումը մինչ այժմ չի ապահովվել:
3. Ինստիտուտը ֆինանսավորման պահանջ է ներկայացրել նաև պետական կառավարման տարբեր մարմինների կողմից ներկայացված պետական գնումների ցանկերի փորձաքննության շուրջ 5 մլն. դրամի աշխատանքների ֆինանսավորման համար: Սակայն այդ աշխատանքների ֆինանսավորումը մինչ այժմ չի ապահովվել:
4. 2009-2010թթ. մոտ 3 անգամ կրճատվել է պետական բյուջեից հատկացվող ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը, ինչը ներկայումս լուրջ խնդիրներ է առաջացնում ստանդարտացման աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար:
5. Անհրաժեշտ է հաստատել կանոնավոր և հաճախակի ուղիղ, անմիջական և հետադարձ կապ ՀՀ էկոնոմիկայի նախարարի և Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի միջև՝ առաջացող հարցերին օպերատիվ և արագ լուծումներ տալու նպատակով: